ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝**

   Վահե Հովհաննիսյան, ՀՀ ֆինանսների նախարար

2. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

   Ք. Լյուքսեմբուրգ, Լյուքսեմբուրգի Մեծ Դքսություն, 2025 թվականի մարտի 6-ից 8-ը

3. **Հրավիրող կողմը՝**

   Եվրոպական ներդրումային բանկ

4. **Գործուղման նպատակը՝**

   Մասնակցություն Եվրոպական ներդրումային բանկի (ԵՆԲ) խմբի 2025թ. ֆորումին

5. **Քննարկված թեմաները՝**

ԵՆԲ խմբի ֆորումի ընթացքում մասնակից կառավարություններից, գործարար և ֆինանսական միջավայրից մասնակից բարձրաստիճան պաշտոնյաների կողմից անդրադարձ է կատարվել Եվրոպայի քաղաքականության առաջնահերթություններին՝ արդյունաբերության ածխաթթվացում, արհեստական բանականություն, Կապիտալի շուկաների միություն, անվտանգություն, բնակարանային ապահովություն, ԵՄ ընդլայնումը և այլն: Քննարկվել են նաև Եվրոպայի ներդրումային առաջնահերթությունների և ներդրումային կարիքները բավարարելու լավագույն փորձի բացահայտման ուղղությունները: ԵՆԲ կողմից կազմակերպված ֆորումների շարքում առաջին անգամ հիշյալ Ֆորումը ներառել է նաև ԵՆԲ-ի գլոբալ օրերը, որը նվիրված էր համաշխարհային մարտահրավերների քննարկմանը: Առանցքային թեմաներից են եղել Ուկրաինան, էներգետիկ անվտանգությունը, առողջապահությունը, կրիտիկական հումքը և ԵՄ ընդլայնումը:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

Ֆորումի շրջանակներում ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը հանդես է եկել «ԵՄ ընդլայնում. մարտահրավերների հաղթահարում և հնարավորությունների կիրառում» պանելային քննարկմանը: Պանելի ընթացքում մասնակիցները քննարկել են ԵՄ

հետագա ընդլայնման հեռանկարները՝ շեշտելով դրա ազդեցությունը Եվրոպայի անվտանգության, կայունության և ինքնիշխանության ամրապնդման վրա: Խոսվել է Հայաստանի՝ Եվրամիությանը անդամակցելու գործընթացի մեկնարկին ուղղված նախաձեռնության, վերջինիս համատեքստում առաջացած մարտահրավերների մասին: Անդրադարձ է կատարվել մեր տարածաշրջանում հակամարտությունների խաղաղ կարգավորման անհրաժեշտությանը, «Խաղաղության խաչմերուկ» ծրագրին: Այս համատեքստում հատկապես կարևորվել է ԵՆԲ-ի հետ համագործակցությունը և օտարերկրյա ուղիղ ներդրումների ներգրավման հնարավորությունները:

Ֆորումից դուրս երկկողմ հանդիպում է տեղի ունեցել ԵՆԲ փոխնախագահ Թերեզա Չերվինսկայի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են ԵՆԲ կողմից ֆինանսավորվող ընթացիկ ծրագրերի առաջընթացը: Անդրադարձ է կատարվել ՀՀ-ԵՆԲ համագործակցությունն էլ ավելի ընդլայնելու հնարավորություններին, մասնավորապես ենթակառուցվածքների զարգացման ծրագրերում: Խոսվել է «Խաղաղության խաչմերուկ» ծրագրի և վերջինիս իրականացման գործընթացում ԵՆԲ-ի հնարավոր ներգրավման կարևորության մասին:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝**

Հանդիպումների և քննարկումների ընթացքում որոշումներ չեն ընդունվել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. **Ստորագրությունը, ամսաթիվը՝**

Ստորագրող
ՎԱՀԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2903800432

2025-03-14 18:15:50 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

14 մարտի, 2025թ.

Հավելված N 2
ՀՀ վարչապետի
2023թ.մարտի23-ի
N 326-Ն որոշման

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը՝ ՀՀ վարչապետի 26.02.2025թ. թիվ 160-Ա որոշում

3. Անուն, ազգանուն, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

Վահե Հովհաննիսյան - Ֆինանսների նախարար

4. Գործուղման վայրը՝ ք. Լյուքսեմբուրգ, Լյուքսեմբուրգի Մեծ Դքսություն)

5. Գործուղման ժամկետները՝ 2025թ. մարտի 6-8

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

Գիշերավարձ

---

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)

(ընդգծել ծախսերի փոխանցման տարբերակները)

ա.փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝

դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

բ. Գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համար

Ծախսի տեսակը		Վահե Հովհաննիսյան
Ճանապարհածախս	Ավիաճառայության տեսակ (էկոնոմ դաս բիզնես դաս)	էկոնոմ

	Ավիատոմսի արժեքը (դրամ)	**257,572**
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	
	Օրերի քանակը	
	Ընդամենը (դրամ)	
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	132 եվրո
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	54,525.24
	Օրերի քանակը	3
	Ընդամենը (դրամ)	**163,576**
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար	
	Մուտքի արտոնագրի վճար	
	Այլ ծախսեր *(փքաստի ծառայություն)*	**21,453**
Ընդամենը ծախսեր (դրամ)		**442,601**

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

Recoverable Signature

X

Signed by: YESAYAN ARAIK 2303760089

ԱՐԱԻԿ ԵՍԱՅԱՆ
24.03.2025թ.